ելք՝ ողողում է նրա արտերը։ Այժմ գիւղն ունի 80 տուն բնակիչ 635 շնչով, որից 320-ը արական է և 315-ը իգական. Նրանք գաղթել են Հին-Ջուղայից 1606 թւին, Շահ-Աբբասի ձեռքով. պարապում են գլխաւորապէս հողագործութեամբ։

Հողը պատկանում է 2 կալուածատէրերի՝ Հայդար աղա և Միրզա-Ղուլի. բերքի $^1/_3$ մասը աղաներինն է. մօտաւորապէս տարեկան 300 խալվար ցորեն և գարի են վճարում գիւղացիները նրանց, բացի այդ տալիս են՝

Մարդագլուխ	5 *ղրան.*	*Չորս ոչխարին*	2 *ղրան.*
Կովին	3 »	*Էշին*	3 »

Գիւղն ունի Ս. Աստուածածին եկեղեցին, որի դռան առաջը զարդարուած է գեղեցիկ, մեծադիր քարերով, իսկ եկեղեցուն կից գտնւում է խալիֆայական խեղճ ու կրակ դպրոցը, ուր սովորում են 20-ից աւելի աշակերտ-աշակերտուհիներ։ Գիւղացիք մեծամասնութեամբ անգրագէտ են։

Այս գիւղն ունի փառաւոր անցեալ. տարիներ առաջ ունեցել է 600 տուն բնակիչ և Ս. Աստուածածնի վանքը, ուր նստելիս է եղել առաջնորդ և իշխում ոչ միայն Փէրիա գաւառին՝ այլև Համադան քաղաքին։ Սակայն վանքն ամայանալուց յետոյ, բնակիչների թիւը նւազում է և գիւղը կորցնում իր առաջւայ փառքը։

Մի հանգամանք նաև, որ աչքի է զարկում այս շրջանում. դա այն է, որ գիւղացիութիւնն այստեղ ազատ է լօռական ճընշումներից, շնորհիւ աղաների բարեացակամ վերաբերմունքին։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	*Ազքատ*	130
2	*Զունևոր*	40
3	*Միջակ*	250
4	*Ունևոր*	125
5	*Հարուստ*	90
	Ընդամենը	635

ԹԻՐԻՔԵԱՐՏ

Հազարջրիբից դէպի հիւսիս, մէկուկէս փարսախ հեռու